# ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋ

Հարգելի՛ հանձնաժողով,

Մրցույթին մասնակցելու նպատակով և մեր ռիսկերը համարժեք գնահատելու համար խնդրում ենք տալ հետևյալ հարցերի սպառիչ և հստակ պարզաբանումները.

**1. Հավելված 2 – գնային առաջարկի ձևաչափ**

Խնդրում ենք հստակեցնել՝

Հավելված 2-ը ներկայացվելու է՝

- գնման գնի առավելագույն ընդհանուր գումարով, թե
- միավոր գների օրինակով:

Մասնավորապես՝

1-ին չափաբաժնի մասով գնային առաջարկը պետք է ներկայացվի՝

- 36 000 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, թե
- 5 200 ՀՀ դրամ համարժեք միավոր գնով:

**2. Չափաբաժին 2 – բիոզուգարանների քանակ**

Նշված է.

«Բիոզուգարանի տեղափոխում 1-ից 10 հատ ներառյալ (հեռավորությունը հաշվարկվում է Երևանի կենտրոնից)»:

Խնդրում ենք պարզաբանել՝

- արդյոք 1–10 հատը վերջնական և առավելագույն քանակն է,
- թե պայմանագրի ընթացքում պատվիրատուն կարող է պահանջել 10-ից ավելի բիոզուգարանների տեղափոխում:

**3. Միավոր գների փոփոխելիություն**

Խնդրում ենք հստակեցնել՝

մասնակցի կողմից առաջարկվող միավոր գները պարտադիր պետք է չգերազանցեն հրավերում նշված առավելագույն միավոր գները, թե հնարավոր է առաջարկել այլ հարաբերակցություն՝ ընդհանուր արժեքը չգերազանցելու պայմանով:

Օրինակ՝

եթե նշված է

1 կմ – 660 դրամ,

բիոզուգարանի կեղտահանում (կեղտահան մեքենայի կիրառմամբ) – 13 200 դրամ,

արդյոք հնարավոր է առաջարկել

1 կմ – 700 դրամ,

կեղտահանում – 13 000 դրամ,

ընդհանուր արժեքը չգերազանցելու պայմանով, թե յուրաքանչյուր տողի միավոր գինը պարտադիր պետք է չգերազանցի սահմանված առավելագույնը:

**4. «Բիոզուգարանի սպասարկում» ծառայության բովանդակություն**

Նշված է.

«Բիոզուգարանի սպասարկում – հատ/օր – 7 200 դրամ»:

Խնդրում ենք պարզաբանել՝

- ինչ գործողություններ է ներառում տվյալ սպասարկումը,
- եթե սպասարկման օրերի քանակը 1-ից ավելի է (օրինակ՝ 5 բիոզուգարան, 7 օր),
- արդյոք պահանջվում է ամենօրյա սպասարկում,
- և այդ դեպքում սպասարկող անձնակազմի սննդի և գիշերակացի ծախսերը ներառվա՞ծ են նշված արժեքի մեջ, թե պետք է հաշվարկվեն առանձին:

**5. Կեղտահանման հաճախականություն**

Նշված է.
«Կեղտահան մեքենայի կիրառմամբ բիոզուգարանի կեղտահանում – հատ»:
Խնդրում ենք հստակեցնել՝
- տվյալ ծառայությունը նախատեսված է ինչ հաճախականությամբ (օրական, շաբաթական, ըստ անհրաժեշտության և այլն):
**6. Քիմիական նյութի առկայություն**
Մեր կողմից նկատվել է, որ հրավերում չկա հստակ նշում քիմիական նյութի առկայության վերաբերյալ, մինչդեռ այն բիոզուգարանների շահագործման համար առաջնային և պարտադիր բաղադրիչ է՝ բակտերիաների և վարակների կանխարգելման նպատակով:
Տվյալ քիմիական նյութի շուկայական արժեքը կազմում է մոտ 10 000 ՀՀ դրամ / 1 լիտր, սակայն մեկ բիոզուգարանի հաշվարկով այն ներառված չէ հրավերում:
**7. Լվացարանով բիոզուգարաններ և ալկոգել**
Հրավերում նշված է ալկոգելի տրամադրում:
Խնդրում ենք պարզաբանել՝
- արդյոք հնարավոր է տրամադրել լվացարանով բիոզուգարաններ ջրի առկայության դեպքում,
- թե նախատեսվում է բացառապես ալկոգելի կիրառմամբ տարբերակ:
**8. Վճարման կարգ**
Խնդրում ենք հստակեցնել վճարման մեխանիզմը՝
- մեկ ծառայության մատուցման դեպքում վճարումը կատարվում է
- տեղադրումից անմիջապես հետո,
- թե ծառայության մատուցման ժամկետի ավարտից հետո:
**9. Վճարման բանաձևի պարզաբանում (օրինակով)**
Խնդրում ենք օրինակի տեսքով պարզաբանել հետևյալ բանաձևի կիրառումը.
ՎԳ = ՄԳ / ՆԳ × Ծ × Ք, որտեղ՝
ՎԳ – պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,
ՄԳ – ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, որը կազմում է _________ (տառերով) ՀՀ դրամ,
ՆԳ – ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, որը կազմում է _________ (տառերով) ՀՀ դրամ,
Ծ – մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,
Ք – մատուցված ծառայության քանակն է: